

թիւն նոյնափառ Հոգւոյն ճշմարտի գետօրէն ծաւալեսցի, անճառ զեղմամբ պարգեւեսցի, ընդ քեզ եղիցի եւ առ քեզ լիցի:

Եւ ընդ ողջունական օրհնութեան թըղթոյս՝ ծանի'ր, սիրելի', զի քեզ եւս է յայտ մեր վիշտ եւ նեղութիւն՝ թէ ո՞րքան կրեմք այսքան ժամանակ յաղազս պարտուց: Վասն այսորիկ ելեալ մեր շրջագայութեամբ ի քաղաքս եւ ի գեօղորայս օղնութիւն խնդրել ի քսասէր ժողովրդոց, եկեալ յԱրզրում՝ թէ ո՞րքան դառնութիւն մեզ հասոյց Փաշայն, գիտեմ լուեալ իսկ ես: Եւ անտի Երզնկանաւ կամկար գնացիւք ի վերայ քաղաքաց հասաք ի Տիգրանակերտ, եւ անտի՝ ի Սեփաստիայ եւ ի Թոխաթ, որպէս եւ Տէր առաջնորդ էր մեզ: Բայց մինչ ի Համիթ էաք՝ Այ. ատելի Պոսրովն թիւր մտօք զգացուցեալ էր Հիւսէն Աղային, թէ Համթայ ի Հալապ գնալոց է եւ անտի այլուր փախչել կամի, ապա զմեր պարտսն ո՞վ վճարէ. եւ այսքան ժամանակն զոր Վէզիրն զՀիւսէն Աղայն Իղմիր կամէր յղել սակս խանին շինութեան: Աղայն կասէ՝ թէ քաղաքներն շրջելով կու գայ, մեզ եւս չա՛հ կու լինի. նա հակառակօրէն կասէ՝ թէ նա դալոց չէ, մէկ իզար էմր պիտիր, որ բերեն ի տեղս: Վասն որոյ հարկին մեզ վերայ իզար էմրով մուպաշիր ուղարկեցին եւ բերին աստ, յորում եւ խափանումն եղեւ օգնութեանն, որ լինելոց էր ի քաղաքցն: Իսկ աստ յորքան ժամանակս եկեալ եմք, մէկ որ հիւանդութիւնք ազգի ազգի պատեանց զմեզ,